Անհատական սոցիալական ծրագրերով սահմանված և ամբողջությամբ իրականացված միջոցառումներ:

Սոցիալական աշխատողների կողմից կազմվել և պարբերաբար թարմացվել են փաստաթղթերը, մասնավորապես լրացվել են հետևյալ փաստաթղթերը՝

- Առաջնային տնային այցելության թերթիկ
- Երեխայի կարիքների գնահատում
- Շահառուի և ընտանիքի կարիքների գնահատում
- Շահառուի և ընտանքիի կարիքների վերագնահատում
- Սոցիալական պատմության հավաքագրում
- Գենոգրամի և էկոգրամի կազմում
- ԱՍԾ-ի (միջամտության պլան) կազմում
- Օրագրերի կազմում և թարմացում
- Անհատական սոցիալական աշխատանքի թերթիկի լրացում
- Ընտանիքի անդամի հետ աշխատանքի թերթիկ լրացում
- Ընթացիկ տնային այցելության թերթրիկի լրացում
- Դպրոցայցելության թերթիկի լրացում
- Սոցիալական բնույթի ծառայությունների նվիրաբերության պայմանագրի կնքում
- Անձի տվյալների վերաբերյալ հայտարարագիր

Հոգեբանը կազմվել է հետևյալ փաստաթղթերը՝

- Երեխայի անհատական քարտի լրացում
- Խորհրդատվություն երեխայի հետ
- Խորհրդատվություն ընտանիքի անդամների հետ
- Հոգեբանական աշխատանքի թերթիկ
- Տնայցեր
- Մայերի ինքաաջակցման խմբի հետ հանդիպումների թերթիկ

Տնայցեր: Կենտրոնի սոցիալական աշխատողները հաշվետու ժամանակահատվածում իրականացրել են **14** տնայց, որից՝ **11**-ը առաջնային հետազոտության տնայցեր և **3**-ը ընթացիկ տնայցեր:

Առաջնային տնայցի նպատակն էր հետազոտել ընտանիքի կենսապայմանները, ընտանիքի կազմը, զբաղվածությունը, երեխայի և ընտանիքի առաջնային կարիքները, դուրս բերել երեխայի հետաքրքրությունները, ուսումնական առաջադիմությունը: Առաջնային հետազոտության հիման վրա իրականացվել է կենտրոնի բազմամասնագիտական թիմային քննարկում՝ կենտրոնում շահառուների ընդգրկման նպատակով:

Ընթացիկ տնայցերը իրականացվել են ԱՍՀՆ մասնագետների հետ համատեղ՝ կենտրոն իրականացված ուսումնասիրության շրջանակներում:

Առողջապահական, սոցիալական և կրթական հարցերի շուրջ իրավաբանական խորհրդատեղեկատվական և ուղղորդման ծառայություններ:

- Օգոստոսի 9-ին կենտրոնի շահառու **3** Արցախից տեղահանված ծնողներ ուղղորդվել են իրավական խորհրդատվության, որը իրականացվել է **ՀՀ ՄԻՊ աշխատակազմի** կողմից կազմակերպված <<Կանանց իրավունքների պաշտպանություն և խթանում գործարարության ոլորտում>> թեմայով քննարկմանը՝ Գավառ քաղաքում:
- Հուլիսի 25-ին կենտրոնի շահառու ծնողները և **5** երեխա/աղջիկ/ կենտրոնի սոցիալական աշխատողների ուղղորդմամբ և ուղեկցմամբ մասնակցել են **«Ռեստարտ Գավառ»** Երիտասարդական ՀԿ-ի կողմից կազմակերպված է՝ Գավառում Աշխատանքի